ՀՖԿՍՊԻ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը վերականգնողական բժշկության՝ կինեզիոլոգիայի և կինեզոթերապիայի ոլորտում.

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ,

Կարևորելով կինեզոլոգիայի և կինեզոթերապիայի պրակտիկությունը կրթության կազմակերպման գործում.

Ընդունելով կինեզոլոգիայի և կինեզոթերապիայի ոլորտի տեսության և պրակտիկայի զուտագեռ զարգացմանն ուղղված Կողմերի ջանքերը և պատրաստակամությունը,

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են.

2.1.1 «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում (այսուհետ՝ Բժշկական կենտրոն) ուսանողների պրակտիկաների կազմակերպման միջոցով,

2.1.2 Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի (այսուհետ՝ Ինստիտուտ) կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում,

2.1.3 նորարարական, ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2.1.4 սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2.1.5 Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում,

2.1.6 սույն Հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, Բժշկական կենտրոնի տարածքների, գույքի օգտագործման միջոցով,

2.1.7 երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների, փորձաքննությունների իրականացման շուրջ,

2.1.8 համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու միջոցով:

2.2 Կողմերն իրականացնում են նաև մասնագիտական և ասպիրանտական հետազոտական համատեղ ծրագրեր:

2.3 Համագործակցում են երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական (վերականգնողական, առողջարանական և այլն) բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում համատեղ հետազոտությունների իրականացման ոլորտներում:

2.4 Կազմակերպում են միջազգային գիտական կոնֆերանսներ, սեմինարներ, ստեղծագործական բանավեճեր, խորհրդակցություններ:

2.5 Իրականացնում են գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակում:

2.6 Կարող են հայցել և ստանալ համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն:

2.7 Կողմերն իրականացնում են գրադարանային ֆոնդի համատեղ օգտագործում:

3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2021թ. հունիսի 18-ին:

4.6 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ	**Բժշկական կենտրոն**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Երևան, Գյուրջյան 10
Ռեկտոր՝ Դավիթ Խիթարյան	Տնօրեն՝ Արման Հովակիմյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.